

գիտական աշխարհին մէջ, գովելի եւ օգտակար, անոնց համընթաց նաեւ ջանադիր պէտք է ըլլանք մեր բարոյական անումին.

Կ'ապրինք արագ փոխուող աշխարհի մը մէջ, հարկ է որ, այդ արշաւին մէջ, ամուր պահենք մեր քրիստոնէական սկզբունքները: Մարդիկ, պէտք ունին այսօր հոգեպէս վերանորոգուելու, նաեւ Քրիստոսի պատգամով դառնալու նոր արարածներ:

Պատմութեան մէջ, պայքարը շարունակուեցաւ խաւարի եւ լոյսի որդիներուն միջեւ, հակառակ խաւարի ուժերու երեւութական յաղթանակին, վերջին

եւ տեւական յաղթանակը լուսոյ որդիներունն է: Թող մեր գործունէութիւնները՝ գեղուն ըլլան քրիստոնէական Սիրոյ եւ ծառայութեան ոգիով:

Անցնող տարեփակին եւ Նոր Տարուայ սեմին կանգնած, աղօթենք որ բարձրեալն Աստուած, ուժ եւ կարողութիւն շնորհէ, Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր, Տ. Թորգոմ Արք. Մանուկեանին, եւ Միաբանութեան անդամներուն եւ մեր համայն ժողովուրդին, որպէս զի իրագործուին մեր ազգային եւ կրօնական ծրագիրները, մեր ամբողջ ազգին պարգեւելով երջանկաբեր եւ արդիւնաշատ տարի մը:

ԱՆՈՒՇԱԿԱՆ Ծ. ՎՐԴ. ԶՂՋԱՆԵԱՆ

Աղօթք Սբ. Փրանկիսկոս Ասիզացոյ

Տէ՛ր,

Դարձուր ինձ Քու խաղաղութեանդ գործիք,

Որ սէր բերեմ հոն՝ ուր ատելութիւն կայ,

Որ հաշտութիւն բերեմ հոն՝ ուր վիրաւորանք կայ,

Որ միութիւն բերեմ հոն՝ ուր հակառակութիւն կայ,

Որ հաւատ բերեմ հոն՝ ուր կը տանջէ տարակոյսը,

Որ ճշմարտութիւն բերեմ հոն՝ ուր կ'իշխէ սխալը,

Որ յոյս բերեմ հոն՝ ուր կը սպառնայ յուսահատութիւնը,

Որ ուրախութիւն բերեմ հոն՝ ուր կը շատնայ

տխրութիւնը,

Որ լոյս բերեմ հոն՝ ուր կը թագաւորէ խաւարը:

Տէ՛ր,

Օգնէ ինձի, որ չունենամ կարիք ու չխնդրեմ

մխիթարուիլ, այլ՝ մխիթարել,

հասկցուիլ, այլ՝ հասկնալ,

սիրուիլ, այլ՝ սիրել:

Որովհետեւ՝

Ով որ կու տայ՝ կը ստանայ,

Ով որ կը ներէ՝ անոր պիտի ներուի,

Ով որ կը մեռնի՝ պիտի ծնի յաւիտենական կեանքին

համար:

Ամէն: